

Ք Ս Ա Ն Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

ՄՇԱԿ

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Թ Գ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Գաղտնաբերութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Ծայրագործութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկով.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ս Մ Ո Ւ Լ

Աշխատարար դասակարգի կրթութիւնը, որ այնքան հարկաւոր է թէ նրա և թէ հասարակութեան բարեկեցութեան համար, մի մեծ յաղթանակ տարաւ: Այս տարի Անգլիայի Օքսֆորդ քաղաքում բացվեց մի համալսարան յատկապէս բանուսման համար: Եւ բացողը անգլիական կառավարութիւնը չէր, այլ մի երկուստեք ամերիկացի, որ թէ հարկաւոր դրամական նուէր տուեց և թէ անձամբ գործի գլուխ կանգնեց: Փետրվար ամսին Օքսֆորդում կազմված մի մեծ ժողովը մէջ երկուստեք բարեգործը, ինչպէս հաղորդում է Ֆրանսիական «Revue des Revues» հանդէսը, ասաց, որ անհրաժեշտ է բաց անել մի կողմէ, որի մէջ ուսանողները կը սովորէին քաղաքային գաղութային լեզուները հայրենիքի և թէ աշխարհի բարոյութեան համար:

Այս հիմնարկութիւնը—ինչպէս ասաց ճառարարը—պետք է դառնայ ազգայնապաշտպանութեան գերեզման, որովհետև բանուսման ամբողջ, հիմնարկական աստիճանով համայնական հարցերի հետ, ընդունակ կը դառնայ գիտակցաբար վերաբերվելու այն հեռանկարներին, որոնք գծազգրվում են նրա առաջ և մերժել այդ հեռանկարները կամ ընդունել նրանց ոչ թէ քաղաքով, այլ գիտական պատրաստութեան հիման վրա: ճառարարը երկար խօսեց հին համալսարանների մասին և յայտնեց, որ դրանք պետք է շարունակեն իրանց գոյութիւնը. բայց դրանք հետ մի շարքում պետք է կենսապես ստանան նոր հիմնարկութիւններ, որոնք շղթայի օղակների պէս պետք է միացնեն հին համալսարաններում աւանդուղի գիտութեան իղէտական շղթան բանուսման կենսաբան գործնական շղթայի հետ: Նոր հիմնարկութիւնը պետք է ներկայիս բոլոր ազգերի միացման դաշտարան և պետք է աշխատէ խաղաղութիւնը և ազատութիւնը պաշտպանելու համար:

Առ այժմ համալսարանում ուսանողները բազմաթիւ չեն, բայց եղանակներ էլ բաւական են ցոյց տալու թէ որքան համալսարանի հիմնարկութիւն է դա: Ուսանողների մէջ կան երկու այդպէանման շրջանակներ չլինող, կաթսանների վարպետ, մագորդ, երկրագործ, հեռագրական պաշտօնեայ, գրաշար, բժիշկ, երեք գործակատար: Համալսարանը մտնելու համար պէտք է սկզբնական լաւ կրթութիւն ունենալ: Կարելի է միայն ուրախանալ, որ այդ տեսակ մարդկանց

են միայն ներքինին, դպիրը, կինը և արեղանը, հետզհետէ ոյծ է ստանում ճգնաւորութիւնը և, նրա հետ միասին, ախորանջը դէպի թուրքաւոր իրազանքները, դատարկ վիճաբանութիւնները, թղթակերութիւնը և ճամարտակութիւնը: Թուրքացի մայրն ազգակալարանները փոխարինում են յունաց բազարի ըմբռններին և հռոմայնիկներին տուրկն զինուորներին: Սակաւ առ սակաւ արգելվում են կենդանի տիպարների ճանաչութիւնը և ուսումնասիրութիւնը: Այլ ևս չեն տեսնում նրանց, աչքի առջև կան միայն հին վարպետների երկերը և գեղարվեստով պարագլուխները ընդօրինակում են այդ երկերը: Եստ չանցած ընդօրինակում են միայն պատճէնների պատճէնները, և այդպէս յաջորդաբար, այնպէս որ ամեն մի սերունդ մի աստիճան աւելի է հեռանում նախապարկից: Արուեստագէտը չունի այլ ևս իր սեփական գաղափարը և զգացմունքը. նա ծրարանաւոր (calquer) գործը է միայն: Ահեղեղ հարերը հաշկուում են, որ նա չէ յորինում ոչինչ, այլ օրինակում է այն գծերը, որ ցոյց է տալիս աւանդութիւնը և որ ընդունել է հեղինակութիւնը: Արուեստագէտի այդ անձատուր բուն տիպարից հասցնում է գեղարվեստը այն վիճակին, որ մենք տեսնում ենք Ռաւէնայում: Հինգ դար անցած՝ մարդուն չեն կարողանում այլ ևս պատկերացնել այդպէս բան նստած կամ կանգնած, այն էլ պիտի ու կտորվածի տեսք ունեցող ձեռք ու ոտքով, տախտականման շրջապարով, այնպէս որ կարծէք մարդիկ չեն նկարված, այլ փայտէ խրտուիլակներ:

Այդ օրինակը, որի նմանները շատ կարելի է բերել, և վերջիվերջ բոլոր փաստերը ապացու-

ԲՈՎԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անգործ ենք մնում.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Փորձնական ազարակ Երևանում. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.— ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.— ՅՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ինչ է գեղարուեստը:

ԱՆԳՈՐԾ ԵՆՔ ՄՆՈՒՄ

Մտ մի ամիս է, որ Կովկասի բարձր իշխանութիւնը հրատարակեց իր այն շրջաբերականը, որով առաջարկվում է այժմից իսկ առողջապահական նախապատրաստութիւններ տեսնել, որպէս զի եթէ Կովկասի սահմաններում յայտնվելու լինի տարափոխիկ հիւանդութիւն, մենք յանկարծակի եկածի նման չը լինենք և կարողանանք աջողութեամբ կուշի անկոչ հիւանդի դէմ: Այդ կարգադրութեան առիթով մենք մեր լրագրող մտնողութիւն յայտնեցինք, որ մեր երկրի ազգաբնակչութիւնը լիովին աջակցութիւն ցոյց տայ տեղական իշխանութիւններին, հասկանայ որ չէ կարելի ձեռքբերել ծաւառ նստել և սպասել, որ ամեն ինչ կատարէ ոստիկանութիւնը: Կովկասեան բոլոր քաղաքները այժմ վայելում են ինքնավարութիւն, որի բուն նշանակումն է քաղաքայինը համարաշնչ գործակցութեամբ զենել առողջապահական բարեկեցիկ պայմաններով մէջ: Ներկայ դէպքում քաղաքային վարչութիւնները պետք է ցոյց տային իրանց ամբողջ եռանդը, պետք է ցոյց տային թէ որքան լաւ են ըմբռնում իրանց անմիջական պարտաւորութիւնները:

Բայց մինչև այժմ միայն Թիֆլիս քաղաքը կազմեց մի յատուկ աստիճանական յանձնաժողով, որ, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, արդէն գործում է և մի շարք որոշումներ է կայացրել ժամտախտի դէմ կուշիութեան համար: Առ այժմ այդ կարգադրութիւնները մեծ մասամբ միայն թղթի վրա են և մենք դեռ կը տեսնենք թէ կովկասեան մայրաքաղաքը ինչպէս է կարողանում խօսքը գործ դարձնել: Եւ

մեզ հետաքրքրող հարցը այդ չէ: Եթէ Թիֆլիսին աջողվի նայն իսկ հրաշքներ կատարել, այդ չի լինի մի համոզիչ նշան թէ Կովկասը այնքան զարգացել է, այնպէս ինքնաձայնալուծեան է հասել, որ գիտէ ժամանակին պատրաստվել, զինվել թշնամու դէմ: Թիֆլիսը Թիֆլիսի համար է: Իսկ ի՞նչ են անում մեր գաւառները: Այնտեղից գործունէութեան լուրեր չեն հասնում մամուլին. ըստ երևոյթին, այնտեղ առում են. Ե՛հ, ինչ կայ, դեռ այսօր փտանջ չէ սպառնում, երբ ժամանակը կը գայ, մենք էլ մի բան կանենք:

Այսպէս խօսել գիտէ միայն ասիական դանդաղողութիւնը, անտարբերութիւնը: Առօրեայ հարգարտութիւնը քաղաքական շատ խրատներ պետք է լինեն մեր ժողովրդին. նրանք հասկացրած պետք է լինեն, որ ժամանակին միջոցներ ձեռք առնելը թշնամուն կիսով չափ յաղթել է նշանակում: Բայց մեր ասիացի ժողովուրդը կենսաբան գասեր առնել չը գիտէ. մեր մէջ դեռ շատ ուժեղ է կոյր հաւատը ձախտազրի վերաբերմամբ, մենք շատ ենք սիրում կրկնել «ինչ լինելու է, կը լինի»: Այս թշուառ մտրութիւնն է պատճառ, որ մենք չենք կարողանում ինքնօգնութեան որևէ շրջանից գործ ստեղծել հասարակական աղէտների ժամանակ. կը գայ սով—մենք անպատրաստ ենք, կը գայ հիւանդութիւն—գարձաւ անպատրաստ ենք: Հայրերից, պապերից սովորել ենք, որ շարժվել, մի բան անել հարկաւոր է միայն այն ժամանակ, երբ անողը թշնամին արդէն ծեծում է մեր դուռը: Եւ չենք ուզում ականջ զննել այն նոր ձայնին, մեր ժամանակի այն անուրանալի ճշմարտութեան, որ ասում է թէ չէ սուժում, չէ յաղթվում միայն նա, ով ընդունակ է թշնամուն հետուից տեսնել և պատրաստ լինել:

Այդ բանը չը հասկանալուց է, որ մենք կարծում ենք թէ պատրաստվել նշանակում է ընդունել, որ տարափոխիկ հիւանդութիւն անպատճառ պետք է լինի: Ո՛չ: Երբ ճիշտատեսանում ստականում է ժամտախտը, և մեզ առում են թէ պէտք է պատրաստվել, այդ չէ նշանակում թէ

ժամտախտը անպատճառ պետք է գայ մեզ մօտ: Մենք պարտաւոր ենք, մեր սեփական օգտի համար, պատրաստ լինել, մենք պետք է ենթարկենք թէ սարսափելի թշնամին կարող է մեզ էլ այցելել: Եւ եթէ նա պատրաստութիւնները—Ամենին ոչ: Մեր կենսաբան առողջապահական գիտութեան պահանջներին մօտեցնելը մի ահագին հարց է, որ մեր մտածողութիւնները, մեր ջանքերը առարկան պետք է լինի: Բաւական է մի մի անգամ ականջ զննել թէ ինչ է առում գիտութիւնը և ապա նայել մեր իրականութեան. այդ ժամանակ միայն մենք կարող ենք զգալ թէ որքան սարսափելի պայմաններով ենք շրջապատված: Թւանք շանտներ, գիտական ապացոյցները մեզ համար համոզիչ չեն լինում կենսաբան սովորական պայմաններով մէջ: Միայն այնպիսի դէպքերում, երբ մենք սպասում ենք խօսքային, ժամտախտի կամ մի այլ համաճարակի պէս ահաբեկ թշնամուն, որ իր նայել չը գիտէ, միայն այդ ժամանակ մենք ստիպված ենք լինում մտածել մեր քաղաքի կամ գիւղի մարդկութեան մասին և մի յայտնի աստիճանի յօժարութեամբ կատարում ենք գիտութեան պահանջները, այն պահանջները, որոնք միշտ ամեն օր պետք է կատարված լինեն: Ուրեմն մենք ոչինչ չենք կորցնի, եթէ այն թշնամին, որի համար պատրաստվում էինք, չը գայ մեզ մօտ: Ընդհակառակ, մեր օգուտը ակնեղ է...

Անհրաժեշտ է, որքան, մեծ ուշադրութեամբ վերաբերվել մեր կառավարութեան հրահրին, գործել, չը խնայելով միջոց ու եռանդը: Մենք անգործ ենք, իսկ սա կատարելապէս յանցանք է: Մեզ չի ուրախացնի Թիֆլիսի կամ մի այլ քաղաքի առանձնապէս աչքը ընդունող գործունէութիւնը: Մենք շատ ուրախ կը լինենք, եթէ ամենքը համակրեն գործելու մի ընդհանուր եռանդով և մեր երկրի բոլոր անկիւնները հասկանան ու գործադրեն այն, ինչ այնքան հարկաւոր է մեր բարեկեցութեան համար:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԻՆՉ Է ԳԵՂԱՐՈՒՆՍՏԸ

(Ըստ Տէնի)

Իր ուսումնասիրութեան մեթոդը պարզելուց յետոյ Տէն աշխատում է որոշել, թէ ինչու են կայանում գեղարուեստի էությունը:

Այդ նպատակով հինգ մեծ գեղարուեստներից,— բանաստեղծութիւն, քանդակագործութիւն, նկարչութիւն, ճարտարագիտութիւն և երաժշտութիւն,— նա առժամանակ մի կողմ է թողնում վերջին երկուսը և զբաղվում է սկզբում միայն առաջին երեքով, որոնք մի ընդհանուր յատկութիւն ունեն, այն է՝ բոլորն էլ փոքր լի շատ է նման ողական արուեստներ են:

Առաջին հայեացքից, ասում է Տէն, այնպէս է թուում, թէ չինք այդ է նրանց էական յատկութիւնը և թէ նրանց նպատակը կայանում է ըստ կարելոյն ճշգրտայն նմանողութեան մէջ: Պարզ է, որ արձանը, նկարը, դրաման, վէպը և այլն պէտք է շատ մօտիկ նմանութիւն ունենան իրական կենսին, պէտք է ճշգրտեամբ վերաբերուին իրականութիւնը: Եւ իրօք, եթէ նմանութիւնը թերի է լինում կամ անճիշտ, մենք ասում ենք արձանագործին՝ «Այդպէս չը պետք չինք կուրծքը կամ օրունքները»: Գրողին ասում ենք՝ «Երբեք մարդ չէ զգացել և մտածել այնպէս, ինչպէս դուք էք ենթադրում», և այլն:

Բայց կան և ուրիշ աւելի զօրեղ ապացոյցներ

և ամենից առաջ՝ առօրեայ փորձը: Եթէ ըննելու լինենք, թէ ինչ է կատարվում արուեստագետի կենսում, կը նկատենք, որ նա սովորաբար բաժանվում է երկու մասի: Առաջին կէտը ընթացքով, իր տաղանի երկուստեքութեան և հասունութեան միջոցին, արուեստագէտը գիտում է աւարկանքը, ուսումնասիրում է ներքին սիրով ու մանրակրկիտ կերպով, ճիշտ թափում ու շարաւրվում նրանց վերաբերուցիլու համար և վերաբարդում է ամենաբարեխիղճ և նոյն իսկ չափազանցած հարապատութեամբ: Հասնելով կիսմեծի մի որոշ վայրկեանին, նա սկսում է կարծել, թէ այժմ արդէն բաւականաչափ ճանաչում է իրականութիւնը, նա այլ ևս չէ գտնում նրանում ոչ մի նոր բան. այն ժամանակ նա մի կողմ է դնում կենդանի տիպարները և իր փորձառութեան ընթացքում հաւաքած դեղատոմսերով արուեստական է մի դրամա կամ վէպ, մի նկար կամ արձան: Առաջին շրջանը ճշմարիտ զգացմունքի շրջանն է, երկրորդը՝ սեփականակերպ (la manière) և անկուն:

Նոյնն է ապացուցանում և դանաղան դպրոցների պատմութիւնը: Բոլոր գեղարուեստական դպրոցները այլասեղանում են և ընկնում ճիշտ այն պատճառով, որ մտածողութեան են տալիս ճիշտ նմանողութիւնը և անտես են անում կենդանի տիպարները: Վերջինք մի օրինակ,— քանդակագործութեան և նկարչութեան անկունը հին դարերում:

Այդ անկան մասին որոշ գաղափար կազմելու համար բաւական է իրար յետևից այցելել Պոմպեյի և Ռաւէնայ: Պոմպեյի նկարչութիւնն ու քանդակագործութիւնը առաջին դա-

րից են մնացած. Ռաւէնայի մօզաիկները վերջերից դարը բաներ են: Այդ հինգ հարկեր տարիների միջոցում գեղարուեստը անուղղելի կերպով եղծվել է, և այդ անկունը ամբողջապէս առաջ է եկել կենդանի տիպարների մտացման շնորհիւ: Առաջին դարում դեռ ևս գոյութիւն էր թանապահա ճաշակները: Մարդիկ արձակ շրբեր էին հագնում, ուրախութեամբ հանվում էին, գնում էին լողաբանները, մերկաձառվին մարզվում էին, ներկայ էին լինում կրկնափ մարտերին և դեռ ևս սիրով ու խնամտութեամբ գնում էին կենդանի մարմին եռանդալից զիբեղը. նրանց քանդակագործները, նրանց նկարիչները չըջապատված էին մերկ կամ կիսամերկ տիպարներով և կարողանում էին վերաբարդել ներքինը: Այդ է պատճառը, որ դուք կը տեսնէք Պոմպեյիում պատերի վրա, փոքրիկ աղօթարաններում, ներքին բակերում գեղեցկատես պարծող կանայք, կայտառ և սեղ հերոսներ, հուճկու լանջեր, թիթևաշարժ ոտներ և մարմին բոլոր շարժումներն ու ձևերը՝ վերաբարդված այն աստիճան ճշգրտութեամբ և այն աստիճան պատմութեամբ, որոնց չէ կարողանում հասնել այժմ ամենաւարակրկիտ ուսումնասիրութիւնը: Հետեւեալ հինգ դարերի ընթացքում սակաւ առ սակաւ փոխվում է ամեն ինչ: Անհետանում են հեթանոսական բարբեր, մարդաբանի սովորութիւնները, այնուհետև դէպի իրականութիւնը: Մարմինն այլ ևս իր ցոյց չէ գրվում. նա ծածկված է այժմ բարդ գեղեցկութեամբ և կորչում է առողագործների, ծիրանիների և արևելեան ձոխ ու արքունիքի հասած պատանին. այժմ յարգի

անշն կայն բացված են զիրտութեան տաճարի դռները:

Բայց կան մարդիկ, որոնք, չը նայած որ համալսարանական կրթութիւն են ստացել, չեն կարողանում հաշտվել համալսարանների հետ: Ինչ կասկած, որ խաւար մտքերի առաջնակարգ դրոշակակիրը Սոււլթանին է իր մեծ և տարածված լրագրի հետ: Նա այժմ արշաւանք է սկսել պրոֆէսորների դէմ և այնքան կեղտոտ արշաւանք, որ պրոֆէսորները մէկը «Россия» Լրագրի մէջ հարկադրված եղաւ մի քանի շատ ճիշդ, բայց Սուլթանին և նրա նախնիների համար անօգուտ դիտողութիւններ անել:

«Новое Время» լրագիրը—գրում է պ. Տին պրոֆէսորը—մի զարմանալի շտապութեամբ կեղտոտվոր է թափում մեր համալսարանների վրա: Վարելի էր կարծել թէ այդ խելար չը-ուսյալութիւնը վերջի վերջոյ կը հասցնէ այն սեղանին, որ կեղտոտըր անսպառ աղբիւր էր, վերջապէս, կը չորանայ: Բայց ցեկը շարունակում է շտաբուսանի պէս ժայթքել:

Իրան ցատուկ անբարեխղճութեամբ Սուլթանին օրգանք ինչ որ ակնարկներ է արել այն «դուրեւր միջոցներ» մասին, որոնց իբր թէ դիմում են պրոֆէսորները դատախոսութիւնների կարողութիւն և այդ պատճառով նա առաջարկում էր ստեղծել մի պաշտօն, որ ցած լինէր պրոֆէսորից և բարձր լինէր ուսանողից. այդ տեսակ պաշտօնեաների վրա է մեծ յոյս դնում լրագիրը: Եւ Տին պրոֆէսորը պատասխանում է.

Մենք չը գիտենք թէ ինչ զուգորդման միջոցների մասին է խօսում «Новое Время»-ն, միջոցներ, որոնք գործարդել են և գործարդում են պրոֆէսորները: Մենք չը գիտենք մի այնպիսի երկր, ուր համալսարանների նշանակութիւնը այն չը լինէր, որ ուսանողները լոյսն գիտութիւնը և պրոֆէսորները կարգան գիտութիւնը: Եւ լրագիրը գուր է թաղում համալսարանական գիտութիւնը: Գուցէ նրա խմբագրութիւնը լի է այնպիսի մարդկանցով, որոնք համալսարանական նստարանի վրա լսել են, բայց ոչինչ չեն հասկացել և մի կամ երկու տարի մնալով, հեռացել են, վախճանալով «հիստորիկոսների անպետքը»: Բայց չէ որ համալսարանական ընտանիքի այդ կտրված և դուրս ընկած անդամները չեն կարող իրանց երջանիկ առանձնացատկութիւնները տարածել համալսարանական ամբողջ երկտասարութեան վրա: Այդ երկտասարութիւնը աշխատում է դասախօսութիւններ լսելիս և դասախօսութիւններից յետոյ չնորհիւ այն ամենին, ինչ նա լսել է և ինչ նրա մէջ հետաքրքրութիւն է չարժեք:

Միայնի տարբերակ մտքեր պէտք է քարոզել այն մարդկանց, որոնք մտացել են ամեն մի տարբերակ ճշմարտութիւն և որոնց համար արեգակը արևմուտքից է դուրս դալիս...

Բարեզորութեան գաղափարը—մենք այս քանը շատ անգամ ենք արձանագրել—չարուսակ և անընդհատ բարեչըզման է ենթարկվում: Գիտակցական բարեզորութիւնը ազգատիւ հայ տալու մեքենայական պարտաւորութեամբ չէ բաւականանում, այլ օրէքս իրացնում է անել լի լայն հայեացքներ: «Вѣстникъ Благовѣртель-

гство»-ն ըստ երևոյթիս, թէ գեղարուեստը ամբողջապէս կայանում է ճիշդ և կատարեալ նմանողութեան մէջ:

Սակայն կարելի է արդեօք ընդունել թէ բացարձակ ճիշդ նմանողութիւնն է գեղարուեստի նպատակը:

Սթէ այդ այդպէս լինէր, ամենաճիշդ նմանողութիւնը առաջ կը բերէր ամենազեղեցիկ երկերը: Սակայն ո՞վ կարող է գեղարուեստի րուսանկարը նկարից, ձուլածոն արձանից և ո՞րքանատեսանի աղագիր արձանագրութիւնը վէպից կամ դրամայից, թէ է նմանողութեան ճշդութեան տեսակէտից առաջնիւնը անհամեմատ բարձր են վերջնիւնից:

Այդ մի պատգույց: Ահա և երկրորդ: Լուով-րում մի պատկեր կայ, որ պատկանում է Գէննէրի վրձինին: Գէննէրը բանում էր խոշորացող ապակիով և չորս-չորս տարի էր գործ դնում իւրաքանչիւր կենդանագրի վրա. ոչ մի բան չէ մտածւած նրա նկարած դճմբերում, ոչ կաշու. ամենամանր խողովները, ոչ երեսի անշմարելի պնդանները, ոչ ըթի վրա ցիրուցան սև կետերը, ոչ մանուածապատ ցանցը մանրագիտական երակներին, որոնք կապուտին են տալիս վերնամարմնի տակից, և ոչ աչքերի ցլըը, որի մէջ պատկերաւորում են մերձակայ առարկաները: Մարդ ապշած կանգ է առնում այդ նկարի առաջ, — դուրսը պատարանք է առաջացնում, կարծէք ուզում է դուրս ցատկել շրջանակից. չէ տեսնված երբէք այդքան անըղծւած նմանողութիւն, ոչ էլ այնպիսի համբերութեան օրինակ: Բայց ինչ ընդհանուր առումով Վան Գէյի մի որ և է լայնամասի ուրուանկար հարիւրապատիկ աւելի զօրեղ տպաւորութիւն է գործում

НОСТИ» ամսագրի վերջին համարում դարձեալ կրկնվում է այն միանգամայն ճիշդ և անուարանալի իրողութիւնը, որ մուրացկանութեան դէմ մրցելու ամենալաւ միջոցն է պահպանել աղքատ դասակարգի մարդուն, չը թող տալ որ նա ընկնի այն դրութեան մէջ, երբ մուրացկանութիւնը անխուսափելի է դառնում: Այժմ բարեգործութեան ամենամեծ և ամենալայն նպատակներին մէկն է դառնում աշխատող դասակարգի ապահովութիւնը:

Անպահովութիւնը մարդուն գրկում է ապահովագրական ընկերութիւններին մասնակցելու կարողութիւնից, ստեղծում է այն անբարեխղճ պայմանները, որոնք մայրցիւղում են մարդկանց ֆիզիքական և բարոյական ոյժերը. ուրեքն այս հարցը շոշափում է բոլոր դասակարգերին մարդկանց ձակատագիրը և նրա լուծումը ունի անագին նշանակութիւն:

Օգնութեան կարօտը միայն նա չէ, ով այլ ևս ոչինչ չունի, այլ և նա, ով ունեցածը կորցնելու վտանգի մէջ է և սարսափելի, ոյժերից վեր ջանքեր է գործ դնում իր տեղը պահպանելու համար: Այս ուղղութեամբ մեզ մօտ համարեա ոչ մի գործ չէ կատարված. բայց պէտք է, անպատճառ պէտք է, որ մենք էլ, վերջապէս, անստեղծ և շատ ստիպողական համարենք այս գաղափարը և իրականացնենք նրան կենդանի ձայնով:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՎԱՐԱԿ ԵՐԵՎԱՆՈՒՄ (Նամակ Երևանից)

Վերջին տարիներում պետական կայստաններ միջխտութեան հակողութեան տակ Կովկասի շատ տեղերում հիմնվեցին փորձական ագարակներ, որոնց նպատակն է գործնական կերպով ծանօթացնել ժողովրդին գրեզատնտեսական նոր եղանակներ և երկրագործական նոր սխալով մի գործիչների հետ և այդպիսով նպաստել հողային արդիւնաբերութեան գործին մեր մէջ: Ահա այդպիսի մի փորձական ագարակ էլ գոյութիւն ունի Երևանում, որն ունի ճիւղեր մի քանի գաւառներում, այն էլ՝ Նախիճանին, Էջմիածնին և Կարղիսանի մասերում:

Այստեղի փորձական ագարակը գտնվում է սարդաբերի յայտնի այգիում, որն ընկած է Հրազդանի միւս ափում և բունում է մի ընդարձակ տարածութիւն—աւելի քան ութ հեկտարտին: Ագարակի վրա հսկում է մի գրեզատնտեսութիւն, իր ձեռքի տակ ունենալով մի ինստրուկտոր: Այդ նոյն գրեզատնտեսը, որը մի համակերպի երկտասարդ է—Վանդուրաբան—հսկում է նաև միւս ճիւղերի վրա: Այս ամսովայ ընթացքում մի քանի կիրակիներ փորձական ագարակում նշանակված էին պանազան գրեզատնտեսական փորձեր իրանց բացատրութիւններով ժողովրդի համար: Առաջին անգամ ցոյց տուցին մրգեր չորացնելու վաւարանը և մրգեր չորացնելու եղանակը: Բազմատեսակ մրգերով հարուստ Երևանը մինչև այժմ էլ գաղափար չունի կրակի միջոցով մրգեր չորացնելու մասին. շատ շատ երևանային միջոց կը բարձրացնէր տան կամ ա-

նայողի վրա: Ինչ վերաբերում է աչքախարութեան, նրան մեծ գին չէ արվում ոչ նկարչութեան և ոչ ուրիշ արուեստների մէջ:

Մի երրորդ և աւելի զօրեղ ապացույց, որ գեղարուեստի նպատակը ճիշդ նմանողութիւնը չէ, այն է, որ գեղարուեստներից մի քանիսը դիտմամբ անճիշդ են: Նախ և առաջ հէնց քանդակագործութիւնը: Արձանները սովորաբար մի գոյնի են լինում անապաղովի (թրօւզ) կամ մարմարի, բացի այդ՝ նրանց աչքերը թիւր չեն ունենում: Եւ հէնց գոյնի այդ միակերպութիւնն ու հոգեկան արտայայտութեան այդ մեղմացումն են լրացնում նրանց գեղեցկութիւնը: Արդար, վերջինք այդ տեսակ երկերից այնպիսիները, որոնք մէջ նմանողութիւնը հասցրած է ծայրայեղութեան: Նէպոլի և Սպանիայի եկեղեցիներում կան գունաւոր և գզետեսութեան արձաններ, իսկական սքեմ հագած սուրբեր՝ դեղնուսու ու հողագոյն կաշիով, ինչպէս վայել է ճգնախնդրներին, և արեւաթափած ձեռներով ու ծակված կողքով, ինչպէս պատշաճ է նահատակներին: Սակայն այդ ծայրայեղ նմանողութիւնը ոչ թէ հաճոյք է պատճառում նայողին, այլ մի տեսակ խորհչնող զգացմունք, յաճախ զուտանք, իսկ երբեմն նաև սարսափ:

Նոյն բանն է և գրականութեան մէջ: Դրամատիկական բանաստեղծութեան լուսագոյն կէտի մէջ անձինք խօսում են ոտանաւորով: Վնասում է արդեօք այդ կեղծիքը գեղարուեստական երկերին: Բնաւ: Այդ հիանալի կերպով ապացուցվել է մեր ժամանակների մեծ երկերից մէկին, Իֆիգենիայի փորձով, որ Գեթեին նախ դրել է արձակ ռճով և յետոյ ոտանաւորով: Նա գեղեցիկ է և արձակ ռճով, բայց անհամեմատ

էլի ճիշդ «հնձանի» կտորը և այնտեղ հողերի մէջ և արեգակի տակ մի թիչ շորաշիւր կամ ծիրանալի կը պտտատակ: Մինչդեռ այս նոր վաւարանով, որն արժէ ընդամենը 75 ռուբլի, կարելի է մի օրում չորացնել մինչև 10 պուրջանագան մրգեր. նախ ձմռանով ձուսն են տալիս և մրգերն այդպիսով ապահովում են սեւանալուց և փշանալուց և ապա երկար թիւր մաղիքի վրա դարձած 60 աստիճան տաքութեան մէջ, 10—15 րօպէի չափ չորացնում են: Մեր գեր չորացնելու այս եղանակը մեր երկրին ապագայ է խոստանում: Մեր հրաշալի դեղձը, ծիրանն ու խնձորը, բազմատեսակ խաղողը այդ կերպ պտտատակով, կարելի է ծախել և մայրաքաղաքներում:

Անցեալ կիրակի ցոյց տուցին երկու հետաքրքիր գործիչներ. մէկը բաժնակ անբանները, միւսը՝ ցանքը բազմաները, վնասակար թոյսերն արձատարել անելու համար: Ինչպէս յայտնի է, մեղանում մինչև այժմ այդ երկու աշխատանքներն էլ կատարվում են նահապետական ձևով, և որպիսի չարաչարանքերով, մանաւանդ քաղահանելու: Ով եղել է Արարատեան դաշտում մայրս, յունիս և յուլիս ամիսներում և տեսել է, թէ ինչպէս կանայք և աղջիկներ, արեգակի կիր ձառնաղայիներով տակ, ամբողջ օրը կռացած՝ թոյսերը մէկ մէկ հանում են, նա միայն կարող է ընթանել այդ աշխատանքի ծանրութիւնը, և կարծէք հէնց այդ տանջանքի դառնութիւնն է պատճառ, որ հայ գեղջիկուհու բերանում այդ աշխատանքի միջոցին գեղեցիկ լինելներ այնքան տխուր և մեղանալու են չընչում: Մի դեպիտուն տեղը մի անգամ քաղահանելու համար հարկաւոր են 35 մշակ կանայք, որոնց վարձն արժէ 10 ռուբլուց ոչ պակաս. մինչդեռ յիշեալ գործիքով մի մարդը՝ մի ձիու օգնութեամբ՝ կը վերջացնէ աշխատանքը մի օրում: Բայց չարաչարանքի ծախսի ինայտուց թիւնից, իրենց գործիչները տալիս են և այլ օգուտներ: Սերմանելու գործիքը այնպէս է շինված, որ երկու փոքրիկ խոփեր փափկացնում են հողը և փոս գցում. մի փոքրիկ բացուածքից հետո-հետո սերմը դրոշ հեռաւորութեան ընկնում է փխրուն հողի մէջ և երկու թիւր հողը հաւաքում են սերմի վրա, իսկ մի դատարակ զըլան երեսից փափկացնում է հողը: Այս գործիքով սերմանելիս մի շարքը (ախոր) պիտի հեռու լինի միւսից 1/2 արշին, որպէս զի քաղահանելիս թէ ձին և թէ գործիչն անցնին այդ բաց տեղով, չը վնասելով բաժնակի թիւրին: Քաղահանելու գործիքը նախ փոքրիկ 4—5 խոփերով փորում է միջնակները, արձատարել անելով վնասակար թոյսերը և փափկացնելով հողը, և ապա խոփերի տեղ դնելով երկաթէ թիւր, հողը երկու կողմից տալիս է թոյսերի տակ թմբեր առաջացնելով և մէջտեղ առու բաց անելով, որն ինքն ըստ ինքեան յարմարվում է ջրելու պահանջին: Այս կերպ մշակած ցանքը երկու անգամ աւելի բերք է տալիս, բան նահապետական ձևով ցանվածը: Սերմը գատ ցատ գեղջիկ, սերմիցի մեծ պաշար: Եւ օդի մեծ տարածութիւնը

լաւ է ոտանաւորով: Ակնբերաբար, այդտեղ սովորական լեզուի փոփոխութիւնն է, չափի ու ոտը ներծանումն է, որ տալիս է երկին իր անդուգական ոյժը: Պարզ է ուրեմն, որ արուեստագետ պէտք է վերաբարադրի ժողովի նմանութիւնը առարկաների մէջ եղած ինչ որ մի բանի, բայց ոչ անմեն բանին: Ինչո՞ւն է կայանում այն բանը, որի նմանութիւնը պէտք է դուրս բերի արուեստագետը: Գիցուք ձեր առաջ կանգնած է մի կենդանի պատկերագրու, կին կամ տղամարդ, իսկ դուք ընդօրինակելու համար ունէք միայն մի մատիտ, և մի փոքրիկ կտոր թուղթ: Անշուշտ ձեռնից պահանջող չի լինի, որ դուք դուրս բերէք պատկերագրու մարմնի մասերի մեծութիւնը, ձեր թուղթը շատ փոքր է զրա համար. չին կարող նոյնպէս պահանջել վերաբարադրել նրա մակ ունէք միայն սև ու սպիտակ գոյնները: Ձեռնից կը պահանջվի միայն դուրս բերել յարաբերութիւնները (պրոպորցիաները), այսինքն մեծութեան յարաբերութիւնները: Սթէ զլիք երկարութիւնը այնքան է, մարմնը պէտք է նրանից այդքան անգամ աւելի երկար լինի, կուռը պէտք է ունենայ մի ուրիշ երկարութիւն՝ նոյնպէս կախված գլխի երկարութիւնից, ոտը և մարմնի բոլոր մնացեալ մասերը՝ նոյնպէս: Բացի այդ ձեռնից կը պահանջվի վերաբարադրել ձեռքը կամ դիքը յարաբերութիւնները, — պատկերագրուի որչ կորագծերը, որչ ձուակները, որչ անկիւններն ու խորքերը պէտք է նոյն տեսակ զծերով կրկնվեն պատկերի մէջ:

թիւրին ընդունակ են դարձնում միջին թուղթ 60—70 կօկոս տարու, մինչդեռ հին ձևով 30—ից աւելի չէ լինում կօկոսներ թիւր: Այդ երկու գործիչները միասին արժէն 60—65 ռուբլի:

Նոյնպէս հետաքրքիր էին զանազան միջատների և թրթուռների ոչնչացնելու գործիչները: Այլ և այլ փոշուրներ և նասոսներ ծառայում են ամենաբարձր ծառերի վրա ձծմբի փոշի և կրի ու ծխախոտի ջրեր սրակելու համար. այդ գործիչները մատչելի են իւրաքանչիւր այգետէրին, մի և նոյն ժամանակ պտուղները ազատելով ամեն տեսակ հիւանդութիւններից: Մի քանի բացատրութիւններ տալով խաղողի հիւանդութիւնները, այն է՝ միլդիւնի, օյլդիւնի մասին, խոշորացող վրա ցոյց տուին ֆիլոխէրայի կեանքի դանազան շրջանները և ձուկները: Այդ աւերիչ թշնամուց, բարեբաղդաբար, մինչև այժմ ազատ է մնացել Երևանի նահանգը:

Բացի ինչանչներից ցոյց տուցին նաև շատ ուրիշ բաներ—ծառերի աւերող ճիւղերը մաքրելու և պտուղները քաղելու գործիչները, մեղուներ իրանց ամենավերջին սխտեմի փեթակներով, բացատրեցին թէ ինչպէս այժմ մեղուներ փոխանակ որ իրանք մեղրի թլիչներ պտտանեն, որի համար նրանցից խլվում է շատ ժամանակ և մեծ նիւթ, պտտաստի ստանում են այդ թլիչները և տեղաւորում փեթակների մէջ: Յոյց տուին նաև զանազան պտղատու ծառեր, մեծ մասամբ Փրանսիայից բերած, ծաղիկները բուսնաբեր և այլն:

Այդ բոլորը մեզ վրա շատ լաւ տպաւորութիւն թողեց. միայն ցուալի էր, որ հետաքրքրվողները ընդամենը մի քանի հողի էին: Քանի որ այդ օրինակելի փորձերը և բացատրութիւնները էլի կրկնվելու են, երևանցիների ուշադրութիւնն ենք դարձնում այդ բանի վրա: Ա.—Իօ

ՆԱՄԱԿ ԽՄԱՎՊՈՒԹԵԱՆ

Քանձակ, 13 սեպտեմբերի «Մշակի» 168 համարում ու, Խարաղապի իմ դէմ տպած նամակը կարդացի: Ոչ մի հերքում, ոչ մի ապացույց—անհա իմ ստացած տպաւորութիւնը պարոնի նամակից: Վերջին տողերը, որոնցով նա յայտնում է թէ գործը դատարանին կը յանձնվի, պէտք է ասեք, անչափ ուրախացրեց ինձ: Որ ես նրա անձնական թշնամին չեմ, որ ես խառնակիչ և իբր խօսքեր հնարող չեմ, որ ես Հաջի-Քենդից չեմ փխնել, որ ես կամեցել եմ բացատրութիւն տալ պարոնին, որ ես գրել եմ «Մշակում» փաստը և իրողութիւնը—այդ բոլորը կերակայ դատարանում: Անհամբեր սպասում եմ:

Միմէն Յակոբեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պետերուբրցի «Русск. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ ժողովրդական լուսաւորութեան միջխտութեան մէջ հարց է յարուցված՝ շարժական դպրոցներ հիմնել պետութեան ծայրերում այլազգիների համար:

Նոյնն է գրականութեան մէջ: Գրական կեանքի մի տեսարան նկարագրելու, մեզինց չի պահանջվի արձանագրել մեր տեսած գործող անձնաւորութեան կամ տասը—քսան հոգու բոլոր խօսքերը, բոլոր շարժումները, բոլոր գործողութիւնները: Այդտեղ էլ կը պահանջվի միայն դուրս բերել չափակցութիւնները, կապելու և յարաբերութիւնը: Կը պահանջվի նախ և առաջ ճշդութեամբ պահպանել գործող անձի վարձուցների համեմատականութիւնը, այսինքն պատմածի մէջ զերիշխող տեղ տալ փաստով վարձուցներին, եթէ նա փաստով է, ժխտ վարձուցներին, եթէ նա վարձուցաբար է. ապա՝ պահպանել այդ վարձուցների փոխադարձ կապը, այսինքն այնպէս նկարագրել, որ մի զնու, մի զգացմունք, մի գաղափար բացատրվի մի ուրիշ նախնիժայ ձևով, զգացմունքով գաղափարով և գործող անձի ճիշդ իրական դրութեամբ, որ մենք վերաբերել ենք նրան: Մի խօսքով, գրական երկում, ինչպէս և նկարի մէջ պիտի դուրս բերել ոչ թէ մարդկանց ու զէպրեթի գաղափարները, այլ նրանց յարաբերութիւնները ու կախումները ամբողջութիւնը: Այսինքն նրանց տրամաբանութիւնը՝ ներքին կամ արտաքին:

S. Յովհաննիսեան

